

**ԱՆՏԻՊ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ.
ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ՆԱԽԻՋԵԿԱՆԻ ՀԱՐՑԻ
ԴԵՄԻՐՃՅԱՆԱԿԱՆ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐ**

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող Դերենիկ Դեմիրձյանի ֆոնդում անհրաժեշտ նյութի հերթական փնտրտուքի ժամանակ մեզ համար անսպասելի գտանք 24 էջից բաղկացած մի ձեռագիր, որը Դերենիկ Դեմիրձյանի արխիվի լրացուցիչ մասն ամփոփող գրանցամատյանում գետեղված էր «Չողվածներ, ելույթներ և զանազան գրառումներ» բաժնում՝ «Ղարաբաղի և Նախիջևանի հարցի շուրջ իր դատողությունները. սևագրություններ» նկարագրությամբ:

Ձեռագիրը մշակել է ԳԱԹ Գրական-մեմորիալ բաժնի վարիչ Պարզևուհի Սիմոնյանը 1972 թվականին:

Առաջին հայացքից անծանոթ այդ ձեռագիրը մեզ մղեց նոր փնտրտուքների: Թեև վստահ էինք, որ նման նյութ երբևէ չի հանդիպել ո՛չ գրողի երկերի ակադեմիական հրատարակության 14 հատորում, ո՛չ պարբերական մամուլում, այնուամենայնիվ, ևս մեկ անգամ թերթեցինք Դերենիկ Դեմիրձյանի տուն-թանգարանում, ԳԱԹ-ում և Հայաստանի ազգային գրադարանում պահպանվող գրքերն ու պարբերականները, հարցուփորձ արեցինք տարբեր գրականագետների և համոզվեցինք, որ ձեռագիրն իսկապես անտիպ է:

Ձեռագրի կազմին Դեմիրձյանը կատարել է հետևյալ գրառումը. «Ամենօրյա խառն նոթեր /Ավելի՝ լեզվական/»: Եվ միայն ներքևում ռուսերեն ավելացրել է՝ Карабар:

Դերենիկ Դեմիրձյանի նման զգուշավոր, շրջահայաց մարդը, միանգամայն հասկանալի է, որ պիտի խուսափեր խոսուն վերնագրից, ինչն իսկույն կմատնեի այդ գրառումների բուն էությունը, քանզի 1950-ականների կեսերից սկսված «ձմեռալի» պայմաններում անգամ փոքր չէր համապատասխան գերատեսչությունների ուշադրության կենտրոնում հայտնվելու վտանգը:

Թեև ձեռագիրը ստույգ տարեթիվ չի կրում, սակայն մենք հակված

ենք մտածել, որ այն գրվել է 1954 թվականին: Դրա համար ունենք բավարար հիմքեր:

1954 թվականի ապրիլ, մայիս ամիսներին ողջ Խորհրդային Միության մասշտաբով տոնվում էր Ուկրաինայի՝ Ռուսաստանի հետ վերամիավորման 300-ամյակը: Այս իրադարձությունը լայնորեն լուսաբանվում էր միութենական և հանրապետական մամուլում: Իհարկե, բացառություն չէր նաև Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Ողջույնի և շնորհավորանքի ուղերձներով լի էին հայկական թերթերը, եղբայրական սլավոն ժողովուրդների վերամիավորման փաստին արձագանքում էին նաև գրողները: Դերենիկ Դեմիրձյանը ևս հանդես է եկել հրապարակումներով, որոնք տպագրվել են «Սովետական Հայաստան», «Պիոներ կանչ», «Կարմիր զինվոր» թերթերում: Դեմիրձյանն իր ձեռագրի վերջին էջի վրա նշել է թվարկված պարբերականների անունները: Եվ սա պատահական բան չէր: Նա ցանկանում էր այսպիսով հուշել, որ Հայաստանը ևս, Ուկրաինայի և Ռուսաստանի օրինակով, կարող է վերամիավորվել իր էթնիկական ամբողջության մաս կազմող ժողովրդով՝ հայերով բնակեցված տարածքների հետ՝ այդուհանդերձ չխախտելով Խորհրդային գաղափարախոսության և կարգախոսների ընդունված սահմանները:

Երբ ծանոթանում էինք Դեմիրձյանի վերոհիշյալ հրապարակումներին, մեր ուշադրությունը գրավեց «Սովետական Հայաստան» թերթի 1954 թվի մայիսի 21-ի համարում «Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի առթիվ» խորագրի ներքո տպագրված՝ պրոֆեսոր Վ. Պարսամյանի հոդվածը՝ «Պատմական մեծ ակտը» վերնագրով: Դեմիրձյանի ձեռագրում նշված է նաև թերթի այս համարը, և կարծում ենք, հենց այս հոդվածի առնչությամբ: Պրոֆեսոր Պարսամյանը հրապարակման մեջ իր պատմական էքսկուրսն սկսում է 1654 թվականից, երբ, Լենինի խոսքով, վերջ է դրվել «իրենց և՛ բնակավայրով, և՛ լեզվով, և՛ բնավորությամբ, և՛ պատմությամբ այնքան մոտ, արյունակից երկու ժողովուրդների՝ ռուսների և ուկրաինացիների բաժանմանը»: Հիշատակվում է 1648-54թթ. ազգային-ազատագրական պատերազմը, որը գլխավորում էր ուկրաինացի նշանավոր զորավար Բոգդան Խմելնիցկին՝ նպատակ ունենալով վերականգնել երբեմնի Կիևյան Ռուսիայի ամբողջականությունը, ազատագրված տեսնել ուկրաինացիներին թաթար-մոնղոլական, գերմանական, շվեդական, լիտվական, լեհական, հունգարական, թյուրքական զավթիչների լծից: Հոդվածագիրն այնուհետ սահուն անցում է կատարում դեպի հայ պատմությունն ու զուգահեռներ տանում Խմելնիցկու և Իսրայել Օրու միջև՝ նշելով, որ վերջինս ևս Խմելնիցկու նման Հայաստանի հետագա գոյությունն ու զարգացումը կապում էր Ռուսաստանի հետ:

Կասկածից վեր է, որ Դեմիրձյանի ձեռագրում «Սովետական Հայաստան» թերթի այս համարի հիշատակումը կոնկրետ ուղերձ էր պարունակում և ուներ կոնկրետ հասցեատեր կամ հասցեատերեր:

Բացի այս, Ղարաբաղի և հայության ծակատագրին առնչվող գրառումներ կան նաև գրողի երկերի ակադեմիական հրատարակության 14-րդ հատորում՝ «Օրագրերում»՝ արված 1954 թվականի մարտի 12-ին և 1955-ի մարտի 11-ին:

Ահա դրանք: «1954, մարտ, 12: Հանդիպում ընկ. Միկոյանի հետ: Միտք տվի՝ Անդրկովկասյան պատմությունը, 15-21 թիվը, Բաքվի դեպքերը: Ստույգ պատմությունը: Խոսեցի նացիոնալիզմի գրպարտության մասին, դրա պատվերի մասին, որ գալիս է հեռվից:

Նա խոսեց Բագիրովի մասին, անվանեց ավազակ, ավանտյուրիստ, լավ արտահայտվեց Սահակ Տեր-Գաբրիելյանի և Խանջյանի մասին»:

«1955, 11 մարտի: ... Մեզ պետք են անտառներ, իսկ դրանք Ղարաբաղում են:

Да хранит господь Бог Армению:

Այս փաստերը վկայում են, որ սկսվել էին քիչ թե շատ բարենպաստ ժամանակներ, երբ կարելի էր եթե ոչ բարձրաձայն, ապա գոնե կիսաձայն խոսել մեր ազգային խնդիրների մասին: Հետևաբար Դեմիրձյանը հենց այդ ժամանակահատվածում պիտի վճռեր թղթին հանձնել իրեն այնքան անհանգստացնող խոհերը՝ թեկուզ և քողարկելով դրանք խաբուսիկ վերնագրի ու խորագրի ներքո:

Դեմիրձյանն իր դատողություններն սկսում է հարցով. «Ի՞նչ բան է «Ղարաբաղը»:

Ու ինքն էլ պատասխանում է իր հարցին. «Սա մի հարց է, որին պետք է պատասխանել: Հասարակ հարց կարելի է համարել, հարցնել և պատասխանել:

Երևի Ղարաբաղը գոյություն չուներ՝ իբրև **հարց** (ո՛չ՝ պրոբլեմ, այլ **հարց, հարցմունք**):

Այսինքն՝ մինչև 1918 թիվը: Դա ցարական պետության մեջ գտնվող մի շրջան էր, ուր ապրում էին բնակչության համարյա հարյուր տոկոսը կազմող հայեր: Դա, ըստ տերիտորիայի, էթնիկ փաստի, հայերինն էր:

Հարցը հետո՝ 18 թվին ստեղծվեց: Ո՛վ ստեղծեց:

Տաճիկ հրամանատարությունը՝ Բաքու արշավելու նախօրյակին: Նա Ալեքսանդրապոլում կարգադրեց խառնասովին, որ Ղարաբաղը մտնի Ադրբեջանի սիստեմի մեջ:

Ինչո՞ւ՝ **անպատճառ** Ադրբեջանի սիստեմի մեջ. ի՞նչ «*особый заказ*» էր: Հասարակ պատասխան. դա տաճկական հրամանատարությանը **պետք էր**»:

Իրավացիորեն կասկածի տակ առնելով 1918 թվի տաճկական

«особый заказ»-ի ժամանակավոր լինելը՝ Դեմիրճյանն իր շարադրանքում մի քանի անգամ հիշատակում է Նարինանովի՝ Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու առաջարկի և դրա անհիմն մերժման փաստը: Դատողությունները նրան հանգեցնում են հետևյալ եզրակացությանը. «Ղարաբաղը տաճկական զակազ է. ժամանակավոր չէ, այլ մշտական, և ով պաշտպանում է Ղարաբաղի ներկա ստատուսը, նա պաշտպանում է 18 թվի ստատուսը: Նա ընդունում է տաճկական օրինետացիան: «Նա»-ն այստեղ պետք է համարել նրան, ով պաշտպանում է, ով գիտի և ընդունում է, որ դա տաճկական օրինետացիա է: Թող հրապարակ գա այդ «նա»-ն և բարձրաձայն հայտարարի: Չի՞ հայտարարում բարձրաձայն: Սինույն է. «նա» ցածրաձայն ընդունում է տաճկական օրինետացիան: Որովհետև տրամաբանությունը տանում է այդտեղ՝ իր երկաթե ուժով: Բաց անենք քարտերը. Ղարաբաղը պետք է Տաճկաստանին և Ադրբեջանին: Հետևապես այդ օրինետացիան պետք է: Իսկ եթե պետք չէ, թող վերականգնվի հին ստատուսը՝ էթնիկական Ղարաբաղը միանա իր էթնիկական ազգակցին՝ Հայաստանին: Դա են պահանջում Սովետական իդեոլոգիան, լեւնինգվոն և պրոլետարարությունը»:

Խորհրդային գաղափարախոսությանը, լեւնինյան սկզբունքներին, հայերի՝ ռուսական կողմնորոշմանն անդրադարձները և դրանց լույսի ներքո հայ ժողովրդի հետագա ճակատագրի արժարժումները Դեմիրճյանին զբաղեցրել են ոչ միայն այս նյութում: Նա իր բազում հրապարակային ելույթներում ու հոդվածներում է շեշտադրել այս մոտեցումները՝ նպատակ ունենալով իր ժողովրդի խնդիրների համար շահեկան լուծումների հասնել՝ դրանք հիմնավորելով իր ժամանակի ու պետության չափանիշներին հարիր բանաձևումներով:

«Դատողություններում» հանգամանորեն խոսվում է հայ ժողովրդի՝ ռուս բոլշևիկներին ցուցաբերած օժանդակության, Բաքվի վեցամսյա հերոսական մարտերում ունեցած մասնակցության, մինչև խորհրդային կարգերի հաստատումը Ցարական Ռուսաստանի կազմում երկու առանձին պետություններով ապրելու փաստերի մասին: Այս կերպ Դեմիրճյանը փորձում էր խորհրդային ղեկավարության գիտակցությանը հասցնել այն ճշմարտությունը, որ հայերի հանդեպ տաճկական թշնամանքը գերազանցապես պայմանավորված է եղել իր ժողովրդի ռուսական կողմնորոշմամբ: Նորահայտ ձեռագրում կարդում ենք. «Ղարաբաղը եղել և մնում է իբրև աչքի փուշ Տաճկաստանի համար: Դեռ Անդրկովկասի դռների մոտ դեպի Բաքու արշավանքը ծրագրող տաճիկ հրամանատարությունը ճիշտ հասկացավ ու բարձր գնահատեց Ղարաբաղի այդ ռազմաքաղաքական նշանակությունը: (Փոքրկովկասյան լեռնաշղթայի միջնաբերդ, կռվող (հայ) ժողովուրդ՝ ռուսական հին

օրինետացիայի ստեղծողը և հավատարիմ պահողը)... **Բաքվի հետ միաժամանակ ռուսական օրինետացիա է ունեցել նաև Ղարաբաղը.** նա անգնահատելի ծառայություն է մատուցել Բաքվին և ռուսական գաղափարին. նախ՝ կռվելով տաճիկների դեմ իր լեռներում և երկրորդ՝ չի միացել դաշնակցական ավանտյուրային և հարել է **ռուսների գործին,** որով և չի թուլացրել ռուսական գործը Անդրկովկասում, **այլ ուժ է տվել:** (поддержка): Եվ սրանից հետո պետք է այլևս ասել՝ **Բաքու-Ղարաբաղի դիմադրություն: Կավելացնեի նաև՝ Զանգեզուրի:**

Եվ այսուհանդերձ, Դեմիրձյանը հստակ գիտակցում էր, որ խորհրդային ոչ մի կարգախոս ու տրամաբանական հիմնավորում աղոթեջանցիներին երբևէ չի ստիպի ինքնակամ վերադարձնել Ղարաբաղը: Քանզի իր համոզմամբ «Ղարաբաղը Զանգեզուրի թիկունքն է տաճիկների համար. Զանգեզուրի, որի դռները չկարողացան կոտրել տաճիկները ո՛չ պատմության մեջ, ո՛չ 18 թվին, Զանգեզուրի, որին կարող են տիրել՝ թիկունքից հարվածով:

Ո՛վ պիտի հարվածի... Նա մի հարվածող ունի, հնարավոր մի ագրեսոր. դա Տաճկաստանն է»:

Դեմիրձյանը, անտեսելով ամենայն վտանգ ու սպառնալիք, որոնց հետ պետք էր հաշվի նստել իր ապրած ժամանակներում, համարձակորեն անդրադառնում է մերկապարանոց փաստերին, իրերը կոչում իրենց անուններով: Այսպես. «Մի հանգամանք ևս պետք է նշել և ընդգծել: Տաճկական կառավարությունը բնաջնջեց իր պետության մեջ ապրող հայությանը: Եթե իր «պատիժը» վերագրում էր իրեն հպատակ հայերին, ապա ինչո՞ւ կոտորեց Ախալքալաքի, Լենինականի, Շիրակի, Փամբակի, Բաքվի հայությանը: Ինչո՞ւ է մտադրվել բնաջնջել նաև Անդրկովկասում: Ի՞նչ պլան էր Անդրկովկասի հայերի բնաջնջումը, որ ծրագրեց Վեհիբ փաշան՝ 1918-ի գարնանը»:

Գրող-վերլուծաբանը կարծում է, որ Ղարաբաղը և Նախիջևանը Թյուրքիայի ագրեսիայի սիմվոլներն են Արևելքի նկատմամբ, իր խոսքով՝ «Նրա պլացդարմը»:

Ուստի պետք էր հիմնավորապես ամրացնել այդ «պլացդարմը», դարձնել այն լիովին ապահով և անվտանգ: Իսկ ի՞նչ խոչընդոտներ պիտի ծագեին այդ սև ծրագիրն իրագործելու ճանապարհին տաճկական ագրեսորների համար. միակ դժվար հաղթահարելի խոչընդոտը եղել և մնում էր իր բնօրրանում ապրող հայ ժողովուրդը: Եվ ուրեմն՝ պետք էր վերացնել այդ ժողովրդին՝ ո՛չ միայն ֆիզիկապես բնաջնջելով, այլև սպանելով հոգին, էությունը, տեսակը: «Եվ ի՞նչ են ներկայացնում Ղարաբաղն ու Նախիջևանը Աղոթեջանում,- գրված է ձեռագրում.- երիտասարդությունը չի կարող բարձրագույն կրթություն

ստանալ իր մայրենի լեզվով. ուրեմն և չի կարող Ադրբեջանում մասնակցել որակյալ աշխատանքի՝ իր իսկ բուն մարզում: Ղարաբաղի ժողովուրդը մնում է կիսակիրթ. գյուղացին հետ է մնում: Նա պետք է ադրբեջանականանա, որ կարողանա ապրել և զարգանալ: Ուրեմն ասիմիլիացիա՛... և այն էլ ինչպիսի՛...»:

Հայերի հանդեպ կիրառվող պատժամիջոցների վերաբերյալ արդարացումները, բնականաբար, չեն համոզում Դեմիրժյանին, ինչպես որ չէին կարող համոզել տրամաբանելու ունակ որևէ մեկին: Նա հասկանում ու փորձում է հասկացնել, որ հայերի համար չկա որևէ ելք, փրկություն ստեղծված կացության մեջ: «Թերևս հարկ կա սահմանավորելու՝ հայերի պահանջը.- հարց է տալիս ինքն իրեն, թե իր հնարավոր ընդդիմախոսներին և պատասխանում:- Սահմանավորվել էին իրենց ներկա սահմանում, բայց ինչո՞ւ փորձեցին և սկսեցին հայերի թիվը պակասեցնել: Ես վստահ եմ, որ ինչքան էլ հայերը սեղմվեն, չի դադարելու ժնշումը, չի դրվելու սահման նրանց «սահմանավորման»: Նրանց կժնշեն մինչև բնաջնջում: Հայերը պետք չեն մուսաֆաթական, մենշևիկյան, ինչպես նաև թյուրքական որևէ պլանի, այլ խանգարում են նրանց՝ իբրև ռուսական հենասյուն, և նրանք կռվում են ոչ «հայերի» դեմ, այլ «ռուսների» դեմ Անդրկովկասում»:

Եվ դարձյալ հղում, համառ հիշեցում, հուշում՝ ուղղված ռուսական ականջին, որը, ինչպես վկայում է պատմությունը, լուրջ խնդիրներ ուներ լսողության հետ: Հակառակ դեպքում պիտի անսար Դեմիրժյանի ծայնին. որն ասում էր, թե Ռուսաստանի համար «Ավելի ուժեղ հենասյուն կստեղծվեր Ղարաբաղի, Նախիջևանի և Հայաստանի միացումից. այսինքն՝ ավելի ուժեղ հենասյուն կստեղծվեր ռուսական օրիենտացիայի համար Անդրկովկասում: Զէ՛ որ այն ժամանակ, երբ ռուս զորքերը հեռացան Անդրկովկասից (1918թ.), Բաքուն, Ղարաբաղը և Նախիջևանը (ժողովուրդը) պաշտպանեցին ռուսական օրիենտացիան, որով և մեծապես օգնեցին ռուսական ռևոլյուցիային (բուլշևիկներին, «ռուսներին»): Եվ եթե այն ժամանակ, այն պայմաններում դա կարողացան, ուրեմն որքան կարող են ներկա պայմաններում, երբ Անդրկովկասում ավելի ուժեղացել է հայ, վրացի և ադրբեջանցի բուն ժողովուրդների համակրանքը դեպի ռուս ժողովուրդը»:

Ու դարձյալ ընդհանրացումներ, դարձյալ շեշտադրումներ այն ժամարտության վրա, որ խնդիրը ոչ թե զուտ հայկական, այլ համակովկասյան, ռուսական, ավելին՝ համամիութենական է: Կրկին դիմենք ձեռագրին. «1918-21-ի դեպքերի ծավալը չէ, որ մեծ է: Չնչին է այն խոշոր դեպքերի համեմատությամբ, որ տեղի ունեցան Ռուսաստանում: Նրանք ծավալուն են իրենց քաղաքական (ներքին և արտաքին) նշանակությամբ: Դրանք համակովկասյան ծավալ ունեցան: Այդտեղ գործում էին անգլո-տաճկա-

կան ագրեսիան և ինտերվենցիան, որ նպատակ ունեին գրավել Կովկասը, համեստ դեպքում՝ Անդրկովկասը: Դրա զոհը եղավ (և կլինի ավելի չարաբախտորեն) հայ ժողովուրդը, որ միայնակ կանգնեց տաճկական զորքերի դեմ էրզրումից մինչև Բաքու:

Ի՞նչ պետք է եզրակացնել սրանից: Ի՞նչ անել: Պետք է սրանից եզրակացնել, որ խնդիրը մեր շահագրգռությունը չէ, որ շահագրգռությունը, խնդիրը միայն հայկական չէ, այլ Միության շահագրգռությունն է Անդրկովկասում: Այդ շահագրգռությունը, որ թվում է, թե իրոք մերն է, ստացվել է պատմականորեն: (Ռուսական օրիենտացիա, տաճկական թշնամություն: Կարելի է ավելացնել՝ վրացական և ադրբեջանական թշնամություն)»:

Եվ այս վերջին մտքի վրա Դեմիրձյանը կանգ է առնում բավական հանգամանորեն. ձեռագրում նա կասկածի տակ է առնում ժողովուրդների և քաղաքական վերնախավի վերաբերմունքի, դիրքորոշման ընդհանրությունը: Դեռ 1953-ին գրված մի ելույթում՝ «ժողովուրդների եղբայրության դրոշակակիրը» վերնագրով, արծարծվում էր հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամության հարցը: Ելույթը նվիրված էր ադրբեջանցի գրող Միրզա Ֆաթալի Ախունդովի մահվան 75-րդ տարելիցին, և Դեմիրձյանը, օգտագործելով պատեհ առիթը, իր խոսքում վկայակոչել է երկու ժողովուրդների համակեցության, փոխըմբռնման կարևոր դրսևորումները, փորձել դիվանագիտորեն արդարացնել նացիոնալիզմի մեջ մեղադրվող իր ժողովրդի միանգամայն բնական ու հասկանալի մղումները դեպի սեփական ինքնության գիտակցումն ու ազգային արժեքների պանծացումը: Իր տեսակետը նա հիմնավորել է խորհրդային կարևորագույն կարգախոսին՝ ինտերնացիոնալիզմին անդրադարձով: «Որովհետև չկա ոչինչ, որ ինտերնացիոնալ կարողանա դառնալ, եթե նախ և առաջ խորապես ազգային, ժողովրդային չէ», - գրել է Դեմիրձյանը: Ապա խոսելով Միրզա Ֆաթալի Ախունդովի՝ 1852-ին գրած «Հաջի Ղարա» թատերգության մասին՝ նա հիշատակում է հայ գյուղացիներին վերաբերող հատվածները, ընդգծում վերջիններիս հանդեպ ադրբեջանցի գրողի համակրանքի պարագան և եզրակացնում. «... հայ գյուղացիներին հանդես բերելով՝ Ախունդովը առաջ է քաշում աշխատավորության սոցիալական ազատագրման և ազգությունների համերաշխության խնդիրները»:

Նորահայտ ձեռագրում կարդում ենք հետևյալ տողերը. «Իհարկե, առանձին ուսումնասիրության հարց է, թե իրո՞ք գոյություն ունի այս վրացական և ադրբեջանական թշնամությունը՝ ընդդեմ հայերի, և ովքե՞ր են դրա կրողները: Ժողովուրդները, թե՛ դրանց ինտելիգենցիան (քաղաքական ինտելիգենցիան): Սա կարևոր է, բայց ավելի կարևորն այն է, թե որքա՞ն վճռական դեր կարող է խաղալ դրանցից այս կամ այն խավը»:

Դիմելով նեղ ազգային սահմաններից դուրս եկող վերլուծությունների ընթացքին՝ գրողը տալիս է իր գնահատականը ողջ անդրկովկասյան տարածաշրջանին ու դրանում կատարված, կատարվող անցուդարձերին՝ եզրակացնելով, որ «կուսական» վայր չէ Անդրկովկասը, անգամ Կովկասը: «Անդրկովկասը ռազմաքաղաքական «աքացիների» վայր է: Անդրկովկասն անգլո-տաճկական քաղաքական և ռազմական ագրեսիայի վայր է»,- գրում է Դեմիրձյանը:

Այս իրողությունները հանգիստ չեն տվել գրողին ո՛չ այս անավարտ նյութը շարադրելուց առաջ, ո՛չ դրանից հետո: Դարձյալ հիշենք նրա հրապարակային ելույթները: «Դարավոր բարեկամության պատմությունից» վերնագիրը կրող հոդվածը, գրված 1953-ին, նվիրված էր Յ. Թումանյանի մահվան 30-ամյակին: Դեմիրձյանն իր խոսքում մեջբերում է մեծ լուռեցու՝ 1920թ. դեկտեմբերի 18-ին դստերը՝ Աշխեն Թումանյանին, գրած նամակից հետևյալ հատվածը. «Մեր ապագան, ինչպես միշտ ասել են և դուք էլ գիտեք, կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան ազատ-էնքան լավ, թե՛ մեզ համար, թե՛ աշխարհի»: Ապա փաստում է, որ Ռուսաստանին միանալուց հետո Անդրկովկասում վերջ է դրվել այդտեղ ապրող ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման վտանգին:

Սակայն այն, ինչ՞նա չէր կարող ասել հրապարակային ելույթի, տպագիր հոդվածի կամ գրական ստեղծագործության պարագայում, գրում էր խորհրդային ցենզուրայի ամենատես աչքից հեռու, մանր կտրատված ու հիմա արդեն խունացած թերթիկների վրա՝ մատիտով, ինչպես որ պարտադրում էին իր կյանքի պայմանները: Եվ քանի որ այստեղ նա առավել անկեղծ ու համարձակ էր ինքն իր ու այն ընթերցողի հետ, որին երբևէ պիտի հասնեին այդ մատիտագիր թերթիկները, ուստի բաց է անում բոլոր փակագծերը: «... ո՛չ վրացիները և ո՛չ ադրբեջանցիները տաճիկների հետ այս հարյուր տարվա ընթացքում ընդհարում չեն ունեցել,- գրում է նա,- ավելացնենք և այն ֆակտորը, որ Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդներից միայն հայերն են, որ ռուսական նախկին կայսրության մեջ ապրում էին երկու պետության մեջ, իսկ վրացիները և ադրբեջանցիները՝ միայն մի պետության մեջ, որ միայն հայերն էին, որ տաճիկների հետ արյան պատմություն ունեին, իսկ վրացի և ադրբեջանցի ազնվականությունը՝ բարեկամական կապեր: Այս բոլորը բացահայտ ցույց են տալիս, որ Անդրկովկասի ժողովուրդները՝ իրար կողքի, Տաճկաստանի դեմ կանգնած են հիմնավորապես տարբեր դիրքավորման մեջ»:

Դեմիրձյանն իր օբյեկտիվ գնահատականներում չի մոռացել հիշատակել նաև ստեղծված կացության մեջ մեղավոր մեր դաշնակցական ու բուլշևիկ ազգակիցներին, ինչպես և խորհրդային իշխանության ոչ

հայազգի առաջնորդներին՝ Բագիրովին, Բերիային:

Եվ զարմանալիորեն 20-րդ դարասկզբին հայության համար բախտորոշ այս արծարծումների էջերում երկտողյա գրառում է կատարել Վասակի մասին. «Վասակն անկախությունը, ազատությունն ուզում է իր համար, ինքն է անկախը»:

Փաստորեն, հայ ժողովրդի ժակատագրի շուրջ դատողությունները գրողին զբաղեցրել են ոչ միայն իր ապրած ժամանակների, այլև պատմության ողջ ընթացքի կտրվածքով, և նա դրանց անդրադարձել է ոչ միայն իր հրապարակախոսական գրվածքներում, այլև գեղարվեստական երկերում: Հիշենք Քաջ Նազարի և Թամադայի երկխոսությունը, վերջինիս հայտնի գանգատը յոթ հսկաներից. «Չեն ուզում իրենց աշխարհքը մեզ տան»: Արդյո՞ք այս տողում չէր ամբարված 50-ականներին գրվելիք խոհերի և առհասարակ դեմիրձյանական ողջ աշխարհայացքի էությունը:

Դեմիրձյանը մեծապես կարևորում էր հայ ժողովրդի մարտունակության, ռազմական գործում ունեցած հաջողությունների փաստը: Այդ փաստի հավաստիացումներին նա հետամուտ էր իր ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում՝ սկսած 1905-ին գրած «Լենկ Թեմուր» պոեմից մինչև «Վարդանանք» ու նաև բազում հրապարակախոսական գրվածքներ: Նա ուներ պատճառներ, քանզի կար ժամանակ, երբ հայ ժողովրդին ոչ թե պիտակավորում էին «ագրեսոր» բնորոշիչով, ինչպես այսօր, այլ ընդհակառակը՝ համարում վեհերոտ ու մարտադաշտում կռվելու անընդունակ: Այս մեղադրանքները հատկապես ակտիվորեն էին շրջանառվում Հայրենական պատերազմի տարիներին: Այսպես մտածողներին հակադարձելու մղումով Դեմիրձյանը 1943 թվականին գրեց «Հայ հերոսական ժողովուրդը» հոդվածը, որում մասնավորապես ասված է. «Վեհերոտության մեղադրանքը հայ ժողովրդի հասցեին կամ անգիտություն է նրա պատմության, կամ դա չի վերաբերել բուն հայ ժողովրդին: Այդպես կարծողները չեն ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, չեն լուսաբանել այն հարկ ու պատշաճ ձևով:

Ոչ, հայ ժողովուրդը կռվող ժողովուրդ է:

Հպարտություն է ծնում մարդու մեջ, երբ մտածում ես, թե ինչպես ապրեց ու վերապրեց այս ժողովուրդը: Բնականն ու հնարավորն այն էր, որ նա իսկապես չպիտի ապրեր: Բայց և հրաշքով չէ, որ նա ապրեց: Ապրեց նա, դիմացավ՝ ունենալով դրա ուրիշ հիմքերն ու պատճառները»:

Նույնանման մտքեր են արտահայտվում նորահայտ ձեռագրում: Մասնավորապես. «Թյուրքերը հարձակվեցին Անդրկովկասի վրա: Ծրագիրն էր՝ տիրել այն մինչև Բաքու-Դերբենտ և իրենց ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին: Նրանք հարվածի օբյեկտ ընտրեցին

հայ ժողովրդին, որի բնաջնջումը սկսված էր Թյուրքիայում և ծրագրվում էր ավարտել Անդրկովկասում: Հարվածը տրվեց Հայաստանի գծով՝ Լենինական-Կիրովական-Դիլիջան-Աղստաֆա: Թյուրքերին դիմադրեց (ուրեմն) հայ ժողովուրդը»:

Բայց և այնպես, Դեմիրձյանն իր ողջ էությանը հակոտնյա էր պատերազմ երևույթին, որի գրավոր ապացույցներն անհաշիվ են նրա թողած ժառանգության մեջ: 1942-ին գրված մի հոդվածում կարդում ենք. «Ոչ մի ժողովուրդ չի սիրում պատերազմ: Պատերազմները խախտում են ժողովրդի նորմալ, ստեղծագործական կյանքը»: Նույն այս միտքն է արծարծվում նաև Դերենիկ Դեմիրձյանի տուն-թանգարանում պահվող ծայնագության մեջ, որտեղ Դեմիրձյանը դատապարտող ելույթ է ունենում ֆաշիստական ագրեսիայի դեմ: Հետևաբար իր ժողովրդի մարտական հաջողությունների մասին այդքան հաճախ խոսող մտավորականը շատ ավելի երջանիկ պիտի լիներ, եթե կյանքը չպարտադրեր նրան զբաղվել նմանօրինակ խնդիրներով: Բայց քանի որ իրականությունն այն էր, ինչ էր, ուստի Դեմիրձյանն իր պատժառաքանված ու արդարացի բողոքն է հնչեցնում հայ ժողովրդի հանդեպ տարվող հետևողական, նպատակային ճնշումների առնչությամբ: Եվ գիտակցում է, որ այդ ամենն արվում է խորհրդային ղեկավարության լուռ համաձայնությամբ: Ուրեմն և հասկանալի էր, թե ինչու խորհրդային աթեիզմի գերակայության պայմաններում իր օրագրում կատարած գրառման մեջ նա հայ ժողովրդի փրկության հույսը կապում է Աստծո հետ, ոչ թե իր իսկ մատնանշած ու խորհրդային իշխանությունների համար միանգամայն ընդունելի բուշևիկյան կարգախոսների, որոնց հարկադրաբար ձոնված դիֆիրամբներն այս շարադրանքում, կարծում ենք, առավելապես սեփական անձի ապահովագրման նպատակին էին միտված՝ ձեռագիրը երբևէ հայտնաբերվելու պարագայում: Չէ՞ որ նույն այդ խորհրդային իշխանության աչքի առաջ ու բուշևիկյան կարգախոսների ներքո էին իրականացվում հայատյացության անթաքույց դրսևորումները: «Ամբողջ տրագեդիան այն է,- գրում է Դեմիրձյանը,- որ մի կողմից մեզ լռեցնում են ավելի և ավելի, մյուս կողմից այնպիսի պրովոկացիաներ են անում, որ մենք պրոթականք, անհավասարակշիռ ելույթներ ունենանք, ավելի և ավելի ընկնենք ծայրահեղությունների մեջ (Հեթիսիմենն, Մաշտոցը, Կարսը), և մեզ մեղադրեն **նացիոնալիզմի** մեջ այն ժամանակ, երբ մենք ստիպված ենք լինում ցուցադրել մեր **պատրիոտիզմը**»:

Առհասարակ **չգրված մի օրենք** է դարձել, **չպայմանավորված համաձայնություն** միշտ հայերի պատրիոտիզմը դարձնել մեղադրանք՝ **նացիոնալիզմ**:

Հայ կոլտուրայի որևէ երևույթը նշելը, վեր հանելը, հայ ժողովրդի

որևէ պատմական կամ ներկայի առավելությունը, հայերեն խոսելու ցանկությունը և այլն որակվել է որպես նացիոնալիզմ:

Ոչ մի լեռնիցյան դրույթ, որ հայ ժողովրդի համար ևս գոյություն ունի կարծես. հայերի դեպքում նացիոնալիզմ է: Ղարաբաղի պահանջը, Նախիջևանի պահանջը, Ախալքալաքի համար որևէ դրության պահանջը միշտ համարվել է **նացիոնալիզմ**»:

Այս նյութը վկայությունն է այն անհերքելի ծշմարտության, որ յուրաքանչյուր իսկական մտավորական նախ և առաջ իր հայրենիքի, իր ազգի մտահոգությունների, ցավերի, իհարկե նաև՝ ձեռքբերումների ու հաղթանակների կրողն է:

Հարկ է նաև արժանին մատուցել ձեռագիրը մշակած Պարգևուհի Սիմոնյանին, ով բարեխղճորեն համակարգել ու ոչ պատահականորեն «սևագրությունների» բաժնում ապահովաբար թաքցրել է ձեռագիրը, թեև դա նաև իր համար անվտանգ չէր այն ժամանակներում:

Հավելենք, որ նորահայտ ձեռագիրը պատրաստվում ենք տպագրել առանձին գրքով: Գրքում պահպանված կլինեն հեղինակի շեշտադրումներն այս կամ այն բառի, արտահայտության վրա, ռուսալեզու գրառումներն ու կետադրական նշանները, ինչպես որ դա արվել է մեր այս վերլուծության շրջանակներում բնագրից մեջբերված հատվածներում: Առանձին ենթաբաժնով հրատարակելու ենք նաև Դեմիրձյանի այն գրառումները, որոնք դուրս են մնացել ընդհանուր շարադրանքից և արվել են առանձին թերթիկների վրա, բուն շարադրանքի դարձերեսին կամ լուսանցքներում:

Կարծում ենք, որ այս նյութն առավել լիարժեք կդարձնի մասնագետների և գրասերների պատկերացումները մեծ դասականի մասին: